

ՕՀՄԻ ՕՐԵՆՔԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1770-ական թթ. հոսանքի ուժի և լարման համեմատականությունը փորձ-նականորեն հայտնաբերել է անգլիացի գիտնական Հենրի Կավենդիշը (1731–1810): Ինչպես նշում են նրա որոշ կենսագիրներ, լինելով տարօրինակ անձնավորություն, Կավենդիշը ոչ մեկին չի հայտնում իր այս հայտնագործության մասին:

1820-ական թթ. գերմանացի ֆիզիկոս Գեորգ Օհմը, օգտագործելով իր պատրաստած վոլտյան սյունը, փորձում է կապ գտնել հոսանքի ուժի և լարման միջև: Հոսանքի քանակական չափի մասին Օհմը դատում էր ճկուն լարից կախված մագնիսական սլաքի խոտորման անկյամբ: Բայց Օհմը չէր կարողանում հաստատուն հոսանք ապահովել շղթայում. շղթան փակելուց հետո հոսանքի ուժը միշտ սկսում էր նվազել: Ուստի, որպես հոսանքի աղբյուր, Օհմը վերցնում է գերմանացի ֆիզիկոս Թոմաս Ջեեբեկի (1770–1831) հայտնագործած նոր սարքը՝ ջերմագույգը: Եվ, ահա, 1826թ. Օհմը, վերջապես, հայտնագործում է այժմ իր անունը կրող օրենքը:

1839թ. ֆրանսիացի ֆիզիկոս Կլոդ Պուլյեն (1790–1868), Օհմից անկախ, վերահայտնագործել է հոսանքի ուժի և լարման միջև կապն արտահայտող օրենքը: Ուշագրավ է, որ Ֆրանսիայում երկար ժամանակ այդ օրենքը կոչվում էր Պուլյեի անունով: Կլոդ Պուլյեն հայտնի է նաև իր մի շարք այլ գյուտերով. հայտնագործել է գալվանաչափը, որոշել Արեգակի ջերմաստիճանը, չափել մետաղների և հեղուկների էլեկտրական դիմադրությունները: